

ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ՍԿՋՐԵԱՎՈՐՈՒՄԸ

Միջնադարյան հայ հոգևոր մշակույթի բաղկացուցիչ մասն է կազմում այն ժամանակաշրջանի «գիտությունների մայրը»՝ փիլիսոփայությունը: Գիտության այս բնագավառը, որը տարբեր դասակարգերի ու հասարակական խավերի աշխարհայացքի խտացած արտահայտությունն է, սերտորեն կապված էր ժամանակի գաղափարական հակամարտությունների և օտար նվաճողների դեմ մղվող ազատագրական պայքարի հետ: Այդ է պատճառը, որ V դարի սկզբից՝ հայոց գրերի գյուտից հետո, սոցիալ-քաղաքական բարդ պայմաններում, մյուս գիտությունների հետ միասին իր զարգացման ուղին բռնեց նաև փիլիսոփայությունը: Սկզբից աստվածաբանական գրականության հետ միախառնված, իսկ դարի երկրորդ կեսին՝ արդեն ինքնուրույն հարցակարգով, փիլիսոփայությունն ապրեց աննախադեպ վերելք և ստեղծելով հետագա զարգացման ամուր հիմքեր, դարձավ հայ ֆեոդալական հասարակության գաղափարական վերնաշենքի անբաժան մասը:

Վաղ-ֆեոդալական շրջանի հայ փիլիսոփաների երկերը հնագույնն են Սովետական Միության ժողովուրդների պատմության մեջ և կարևոր աղբյուր են ինչպես Հայաստանի, նույնպես և հարևան երկրների հասարակական մտքի և հոգևոր մշակույթի պատմությունը լուսաբանելու համար:

Հին Հայաստանը, որը մտնում էր հելլենիստական աշխարհի կուլտուրական ազդեցության շրջանակի մեջ, մեծ չափով ընկալել էր հունական փիլիսոփայության գաղափարները, իսկ հունարենը որդեգրվել էր հայկական վերնախավի կողմից՝ որպես գիտության լեզու:

Հեթանոսական Հայաստանի հայ (Տիրան Քերական, Արտավազդ Բ, Ոգյումպ) և այլազգի հեղինակների (Մետրոդոր Սկեպսացի, Ամֆիկրատ Աթենացի, Բարդաժան) ստեղծագործությունները, որոնք, ամենայն հավանականությամբ, նվիրված պետք է լինեին կրոնափիլիսոփայական, պատմական և ճարտասանական հարցերին, ընդհանուր առմամբ կազմում են հայ փիլիսոփայական մտքի նախապատմությունը: Նույն շրջանին են վերաբերում նաև հունական աշխարհում իր գործունեությունը ծավալած IV դարի անվանի հայ ճարտասան և մանկավարժ Պարույր Հայկազնի (Պրոերեսիոսի) երկերը, որոնք նույնպես չեն պահպանվել:

Հայ փիլիսոփայական գիտության կազմավորումը սկսվում է գրերի գյուտից անմիջապես հետո, ֆեոդալական հարաբերությունների և քրիստոնեական աւսմունքի ու եկեղեցու ամրապնդման պայմաններում: Այդ համապատասխան

վճռական նշանակություն ունեցավ հայ միջնադարյան փիլիսոփայության բնույթի ու բովանդակության համար: Որպես ֆեոդալական հասարակության գաղափարախոսություն, այն միջնադարյան էր իր էությունը: Սակայն անհրաժեշտ է շեշտել, որ հայ փիլիսոփայական միտքն ունեւր ուշագրավ առանձնահատկություններ, որոնք բնորոշ էին վաղ-միջնադարյան հայ մշակույթին ընդհանրապես: Հին Հայաստանը մոտ III մ. թ. ա.—III մ. թ. դդ. ընթացքում շփվում էր հելլենիստական աշխարհի քաղաքակիրթ ազգերի՝ հույների, հռոմայեցիների, հրեաների, ասորիների և այլոց մշակույթի հետ, և երբ հայոց գրերի գյուտից հետո արագ թափով սկսեց ձևավորվել հայ գիտական միտքը, հին աշխարհի գիտության, հելլենիստական քաղաքակրթության մի շարք նվաճումներ հեշտությամբ ընկալվեցին ձևավորվող հայ ֆեոդալական հասարակության կողմից, կրելով, իհարկե, եկեղեցու գաղափարական ազդեցության կնիքը:

Իր ձևավորման արդեն սկզբնական փուլում հայ փիլիսոփայությունը հանդես եկավ տվյալ շրջանի համար բնորոշ երկու ուղղություններով: Մեկը հայոց եկեղեցու գաղափարական շահերին իր ուժերն ի սպաս դրած քրիստոնեական ուղղություն էր՝ ջատագովությունը և հայրախոսությունը (ապոլոգետիկա և պատրիստիկա), իսկ մյուսը աշխարհիկ փիլիսոփայական հոսանքը՝ նորպատոնականությունը: Վերջինս մասնակցում էր ֆեոդալական գաղափարախոսության ձևավորմանը, չսպելով իր կապը անտիկ աշխարհի գիտության հետ: Այս երկու փիլիսոփայական հոսանքներից զատ կար նաև ռամիկների ու շինականների, շահագործվող խավերի ձգտումներն արտահայտող մի ուղղություն, որը տարբերայնորեն դրսևորվում էր աղանդավորական շարժումների գաղափարախոսության մեջ՝ անապատականների, մծղնեականների, այնուհետև պամփիլյանների ուսմունքներում: Այդ հոսանքը, սակայն, չստացավ փիլիսոփայական գիտական ձևավորում և նրա մասին պահպանված կցկտուր տեղեկություններն արտահայտված են միայն իշխող գաղափարախոսության հետևորդների քննադատական ասույթներում, որոնք, անշուշտ, անաչառ չեն:

Հայ փիլիսոփայական մտքի ձևավորման գործում նշանակալից դեր խաղացին V—VI դդ. կատարված թարգմանությունները, դրանց թվում առաջին հերթին Աստվածաշնչի թարգմանությունը: Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի և նրանց աշակերտների կողմից թարգմանված Ս. Գրքը ազդեց հայ մտավոր կյանքի համարյա բոլոր բնագավառների վրա: Բանն այն է, որ Աստվածաշունչն իր բովանդակությամբ, իր հանրագիտարանային բնույթով շոշափում էր հասարակական գիտակցության գրեթե բոլոր ձևերը՝ բարոյագիտությունը, փիլիսոփայությունը, իրավունքը, գեղարվեստական գրականությունը, հասարակական-քաղաքական միտքը, պատմագրությունը և այլն: Հասկանալի է, որ նրա ազդեցությունն առավել ուժեղ պետք է դրսևորվեր այն գիտության մեջ, որը ձևավորում և արտահայտում էր ֆեոդալական իշխող դասերի աշխարհայացքը, այսինքն՝ փիլիսոփայությունը և դրա հետ սերտորեն կապված աստվածաբանությունը: Սակայն Աստվածաշնչի և առհասարակ կրոնի խոր կնիքը կրում էր ոչ միայն իշխող ֆեոդալական գաղափարախոսությունը. այն ակնհայտ է նաև աղանդավորական շարժումների գաղափարախոսության ոլորտում, որը նույնպես ելնում էր Ս. Գրքից, բայց հակադրվում էր պաշտոնական եկեղեցու դավանաբանությանը: Քրիստոնեական ուսմունքը, աստվածաբանական դրույթները որոշակի ձևով ազդում էին փիլիսոփայական մտքի նաև աշխարհիկ

ուղղության, չին հունական ժառանգության հետ կապված նորպլատոնականության ու բնափիլիսոփայության վրա:

Հայ փիլիսոփայության ձևավորումը տեղի էր ունենում, երբ Հայաստանը բաժանված էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև և հայ ժողովուրդը մաքառում էր իր ինքնության պահպանման և օտար տիրապետությունից ազատագրվելու համար: Ողջ հասակով ծառացել էր ազգային ինքնապաշտպանության, հոգևոր անկախության, մասնատված ժողովրդի ներքին դիմադրության կազմակերպման խնդիրը: Այդ հանգամանքը, ինչպես և իր պետականությունը կորցրած երկրի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքում հայոց եկեղեցու դերը էական նշանակություն են ունեցել նաև փիլիսոփայական մտքի զարգացման գործում:

Այդ ժամանակների գաղափարական պայքարը ինչպես երկրի ներսում, նույնպես և արտաքին թշնամիների դեմ դրսևորվում էր կրոնական ուսմունքների գոտեմարտի ձևով:

Աստվածաշնչի, դրա Հին և Նոր կտակարանների թարգմանությունը, բացի հայոց եկեղեցու համար ունեցած կարևոր նշանակությունից, հսկայական ազդեցություն ունեցավ հին Հայաստանի, նաև ողջ հայ միջնադարի մտավոր կյանքի բոլոր բնագավառների վրա: Անշուշտ, այն իր խոր կնիքը դրեց ժամանակաշրջանի բոլոր գրողների ու գիտնականների մտայնության վրա, որոնք համարյա անխտիր տոգորված էին կրոնական ոգով:

Հայ փիլիսոփայական մտքի ձևավորման գործում զգալի նշանակություն ունեցան Հին և Նոր կտակարաններին նվիրված մեկնողական երկերի թարգմանությունները:

Ավագ և կրտսեր թարգմանիչները Մ դարի առաջին կեսին հրապարակ հանեցին հույկավոր եկեղեցական մեկնիչներ Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկեբերանի, Ծփրեմ Ասորու, Աթանաս Ալեքսանդրացու, Գրիգոր Աստվածաբանի, Կյուրեղ Աղեքսանդրացու և ուրիշների գործերի հայացված մի հարուստ գրադարան:

Մեկնողական գրականության հետ սերտորեն առնչվում էր ջատագովությունը, որի նպատակն էր պաշտպանել քրիստոնեական ուսմունքը հեթանոսական կրոնի և աշխարհայացքի հետևորդների հարձակումներից, փիլիսոփայորեն հիմնավորել քրիստոնեությունը և արդարացնել, «ջատագովել» այն մյուս կրոնների դեմ մղած պայքարում: Հին հայ թարգմանիչները այդ նպատակով իրականացրել են նաև ճանաչված ջատագովներ Արիստիգես Աթենացու, Հիպպոլիտի, Մեթոդիոս Ողիմպիացու, Ծպլիփան Կիպրացու և այլոց երկերի թարգմանությունները: Ջատագովների գրվածքներում առավել ցայտուն է դրսևորվել քրիստոնեության փիլիսոփայությունը, որը հակադրվում էր անտիկ շրջանի աշխարհիկ փիլիսոփայական ուսմունքներին, մասնավաճ մատերիալիստական և աթեիստական ուղղություններին: Հունական ջատագովների ճանապարհով են ընթացել նաև առաջին հայ մտածողներ Մեսրոպ Մաշտոցն ու Եզնիկ Կողբացին: